IQOS

ILUMA PRIME

ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

IQOS ILUMA PRIME™ ԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ ՍԱՐՔ



IQOS ILUMA™ ԲՌՆԻՉ



IQOS ILUMA-ն նախագծված է միայն TEREA SMARTCORE STICKS™ սթիքների հետ օգտագործելու համար:

Լիցքավորում



Լիցքավորման լար



Սնուցման ադապտեր

Ինչպե՞ս օգտագործել



ՄԻԱՑՐԵՔ

Սեղմած պահեք լիցքավորման սարքի կոճակը 4 վայրկյան, ապա բաց թողեք; լիցքավորման սարքի և բռնիչի կարգավիճակի լույսերը դանդաղ կմիանան:



ԼԻՑՔԱՎՈՐԵՔ ԲՌՆԻՉԸ

Տեղադրեք Բռնիչը Լիցքավորման սարքի մեջ՝ լիցքավորելու և դռնակը փակելու համար (IQOS ILUMA PRIMETM-ի համար): Բռնիչի կարգավիճակի լույսը ցույց կտա բռնիչի մարտկոցի մակարդակը:



ԼԻՑՔԱՎՈՐԵՔ ԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ ՍԱՐՔԸ

Նախքան առաջին օգտագործումը, ամբողջությամբ լիցքավորեք Ձեր սարքը սնուցման ադապտերով և լիցքավորման լարով (մոտ 135 րոպե)

ԻՆՉՊԵ՞Ս ՕԳՏԱԳՈՐԾԵԼ IQOS ILUMA PRIME™ ՍԱՐՔԸ



1.ՏԵՂԱԴՐԵՔ TEREA ՍԹԻՔԸ

Տեղադրեք TEREA սթիքը մինչև ֆիլտրի գիծը մինչև սարքը թրթռա և լույսերը թարթեն: Տաքացումը սկսվում է ավտոմատ, կամ (անհրաժեշտության դեպքում) սեղմելով կոճակը 1 վայրկյան:



2.ՍԿՍԵՔ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Սկսեք օգտագործել այն պահից, երբ սարքը թրթռա, և լույսերը մնան ֆիքսված:



3.ԱՎԱՐՏ

Վերջին 30 վայրկյանների կամ վերջին 2 ներքաշի ազդանշան տալու համար սարքը կթրթռա և լույսերը սպիտակ կթարթեն:

ԻՆՉՊԵ՞Ս ՕԳՏԱԳՈՐԾԵԼ IQOS ILUMA PRIME™ ՍԱՐՔԸ



4.ՀԵՌԱՑՐԵՔ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ TEREA ՍԹԻՔԸ

Հեռացրեք օգտագործված TEREA սթիքը և ամբողջովին սառչելուց հետո անմիջապես դեն նետեք այն, թափոնների հեռացման տեղական կանոնակարգերի համաձայն:



5.ՎԵՐԱԼԻՑՔԱՎՈՐԵՔ ԲՌՆԻՉԸ

Լիցքավորելու համար տեղադրեք բռնիչը լիցքավորման սարքի մեջ:

Հուշումներ և Հնարքներ



ՍՏՈՒԳԵՔ ԲՌՆԻՉԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

Սեղմեք կոճակը, կարգավիճակի լույսը կմիանա՝ ցույց տալով մարտկոցի մակարդակը:

ՍՏՈՒԳԵՔ ԲՌՆԻՉԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ ՍԱՐՔԻ ՎՐԱ

Սեղմեք լիցքավորման սարքի կոճակը: Լիցքավորման սարքի լույսը կմիանա:





ՍՏՈՒԳԵՔ ԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ ՍԱՐՔԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

Սեղմեք լիցքավորման սարքի կոճակը: Լիցքավորման սարքի կարգավիճակի լույսերը կմիանան մարտկոցի մակարդակը ցույց տալու համար:

AUTOSTOP (Ավտոմատ անջատում)

Օգտագործման ընթացքում փորձը կդադարի, եթե TEREA սթիքը տեղաշարժվի կամ հեռացվի բռնիչից:

Հուշումներ և Հնարքներ



ԼՈՒՅՍԸ ԴԵՂԻՆ/ՆԱՐՆՋԱԳՈՒՅՆ Է ԹԱՐԹՈՒՄ

Մարտկոցը սպառվել է, պետք է լիցքավորել



ԼՈՒՅՍԵՐԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ ՍՊԻՏԱԿ ԵՆ ԹԱՐԹՈՒՄ

IQOS ILUMA ONE™-ը տնվում է աշխատանքային ջերմաստիճանի միջակայքից դուրս (0°C~40°C):



ԼՈՒՅՍԸ ԿԱՐՄԻՐ Է ԹԱՐԹՈՒՄ

Վերագործարկել IQOS ILUMA ONE™-ը: Եթե կարմիր լույսը պահպանվում է, դիմեք հաճախորդների սպասարկման կենտրոն:



ՎԵՐԱԳՈՐԾԱՐԿԵԼ

Սեղմեք կոճակը 10 վայրկյան, ապա բաց թողեք: Կարգավիճակի բոլոր լույսերը կանջատվեն, երկու անգամ կթարթեն և կմիանան՝ ՎԵՐԱԳՈՐԾԱՐԿՈՒՄԸ հաստատելու համար:

IQOS
ILUMA

Սա անվտանգության նախազգուշացման նշանն է: Այն օգտագործվում է՝ ձեզ զգուշացնելու ֆիզիկական վնասվածք ստանալու հավանական վտանգի մասին:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒՑ ԱՌԱՋ ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԿԱՐԴԱԼ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

Անվտանգության այս նախազգուշացումները և ցուցումները չեն կարող ընդգրկել բոլոր հնարավոր իրավիճակները, այդ իսկ պատճառով օգտվողները պետք է զգուշ լինեն:

ՊԱՀՊԱՆԵՔ ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԱՅՍ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ԴՐԱՆՔ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

Անվտանգության այս նախազգուշացումները և ցուցումները վերաբերում են IQOS ILUMA™-ին և IQOS ILUMA PRIME™-ին

Ենթադրյալ օգտվողներ

- IQOS ILUMA™-ն, IQOS ILUMA PRIME™-ը և SMARTCORE STICKS™-ը նախատեսված են միայն մեծահասակների համար:
- IQOS ILUMA™-ն, IQOS ILUMA PRIME™-ը և SMARTCORE STICKS™-ը նախատեսված են մեծահասակների համար, որոնք հակառակ դեպքում կշարունակեին օգտագործել ծխախոտ կամ նիկոտին պարունակող ապրանքներ:
- Երեխաներն ու դեռահասները երբեք և ոչ մի դեպքում չպետք է օգտագործեն IQOS ILUMA™-ն, IQOS ILUMA PRIME™-ը կամ SMARTCORE STICKS™-ը:

- Այս արտադրանքը չպետք է օգտագործվի ֆիզիկական, զգայական կամ մտավոր սահմանափակ կարողություններով կամ գիտելիքների պակաս ունեցող անձանց կողմից, քանի դեռ նրանք չեն գտնվում հսկողության տակ կամ նրանց չի տրվել հրահանգ արտադրանքը անվտանգ կերպով օգտագործելու և դրա հետ կապված վտանգները հասկանալու համար:

Ծխախոտ և նիկոտին

- SMARTCORE STICKS™-ը պարունակում են Նիկոտին, որը կախվածություն է առաջացնում:
- IQOS ILUMA™-և, IQOS ILUMA PRIME™-ը and SMARTCORE STICKS™-ը անվտանգ չեն: Ծխախոտի հետ կապված առողջության ռիսկերը նվազեցնելու լավագույն միջոցը ծխախոտ և նիկոտին օգտագործելից ամբողջությամբ հրաժարվելն է:
- Որոշ օգտագործողների մոտ կարող են առաջանալ ցավեր որովայնի, կրծքավանդակի հատվածներում, շնչահեղձություն, հազ, շնչառական խնդիրներ, գլխապտույտ, բերանի չորություն, կոկորդի չորություն, գինգիվիտ, գլխացավ, թուլություն, քթի խցանում, սրտխառնոց, բերանի գրգռվածություն, սրտխբոց, կոկորդի գրգռվածություն և փսխում:
- Նիկոտին պարունակող արտադրանքները չպետք է օգտագործվեն այն մարդկանց կողմից, ովքեր գտնվում են ռիսկային խմբում կամ ունեն սրտային հիվանդություններ, շաքարախտ, էպիլեպսիա կամ նոպաներ:
- Նիկոտին պարունակող արտադրանքները չպետք է օգտագործվեն հղիության ընթացքում կամ կրծքով կերակրելու ժամանակ: Եթե հղի եք, կերակրում եք կրծքով կամ ենթադրում եք, որ հղի եք, ամբողջությամբ հրաժարվեք ծխախոտ և նիկոտին օգտագործելուց:
- Ծխելը դադարեցնելը կամ IQOS ILUMA™-և կամ IQOS ILUMA PRIME™-ն և SMARTCORE STICKS™-ն, կամ նիկոտին պարունակող այլ արտադրանքներին անցնելը կարող է պահանջել որոշ դեղամիջոցների (օրինակ՝ թեոֆիլինի, կլոզապինի, ռոպինիրոլի) դեղաչափի ճշգրտում:
- Եթե չգիտեք, թե արդյոք կարող եք IQOS ILUMA™, IQOS ILUMA PRIME™ կամ SMARTCORE STICKS™ օգտագործել, ելնելով տվյալ պահին ձեր առողջական վիճակից, խորհրդակցեք բժշկի հետ:

⚠ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

⚠ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ Խեղդվելու և կուլ տալու վտանգը

- IQOS ILUMA™-և, IQOS ILUMA PRIME™-ը և SMARTCORE STICKS™-ը միշտ հեռու պահեք երեխաներից և ընտանի կենդանիներից:
- ԽԵՂԴՎԵԼՈՒ ՎՏԱՆԳ՝ SMARTCORE STICKS™-ը պարունակում են սուր եզրերով փոքր մետաղական մասնիկներ:
- ԿՈՒԼ ՏԱԼՈՒ ՎՏԱՆԳ
  - Կուլ տված SMARTCORE STICKS™-ը սուր եզրերով փոքր մետաղական մասնիկների պատճառով կարող են լրջորեն վնասել ներքին օրգանները:
  - Կուլ տված SMARTCORE STICKS™-ը կարող են նիկոտինով թունավորվելու պատճառ դառնալ:
  - SMARTCORE STICKS™ -ը կուլ տալու դեպքում անմիջապես դիմեք բժշկի:
- ՎՏԱՆԳ ՄԱՔՐԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ՝ SMARTCORE STICKS™-ը մասերի մի բաժանեք, քանի որ դրանք սուր եզրերով փոքր մետաղական մասնիկներ են պարունակում: SMARTCORE STICKS™-ը միշտ թափոնեք օգտագործելուց անմիջապես հետո՝ թափոնները հեռացնելու գործող կանոնակարգի համաձայն:

Էլեկտրական ռիսկեր

Այս Անվտանգության նախազգուշացումներին և ցուցումներին չհետևելը կարող է հանգեցնել հրդեհի, պայթյունի, էլեկտրական ցնցումների, վնասվածքի կամ արտադրանքի կամ այլ գույքի վնասի:

- IQOS ILUMA™-ն և IQOS ILUMA PRIME™-ը պետք է օգտագործեն միայն ենթադրյալ օգտվողները:
- Մի օգտագործեք IQOS ILUMA™-ն կամ IQOS ILUMA PRIME™-ը այն վայրերում, որտեղ էլեկտրոնային սարքերի օգտագործումն արգելված է:
- Մի լիցքավորեք կամ օգտագործեք IQOS ILUMA™-ն, IQOS ILUMA PRIME™-ը կամ աքսեսուարները, եթե դրանք վնասված են, կեղծված կամ կոտրված:
- Մի օգտագործեք IQOS ILUMA™-ն կամ IQOS ILUMA

PRIME™-ը, եթե մարտկոցից հեղուկ է ծորում:

- IQOS ILUMA™-ն և IQOS ILUMA PRIME™-ը լիցքավորեք միայն ներսում, ինչպես ցուցված է նշանով՝ լիցքավորելով արտադրողի կողմից հաստատված լիցքավորման լարով (առկա է տուփի մեջ) և սնուցման սարքով (առկա է տուփի մեջ): Մի օգտագործեք արտադրողի կողմից չհաստատված աքսեսուարներ: Ձեր կողմից գնված շարժական հավաքածուի մասին մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարդացեք «Տեխնիկական տվյալներ» բաժինը և այցելեք www.iqos.com:
- Սարքը հարկավոր է լիցքավորել միայն անվտանգ առավելագույն ցածր լարման միջոցով: Լրացուցիչ մանրամասների համար կարդացեք սույն Օգտագործողի ձեռնարկի «Տեխնիկական տվյալներ» բաժինը:

- Մի օգտագործեք, լիցքավորեք կամ պահեք IQOS ILUMA™-ն կամ IQOS ILUMA PRIME™-ը բարձր ջերմաստիճանով վայրերում (օրինակ՝ ամռանը մեքենայի ներսում կամ ջերմության աղբյուրների մոտ՝ տաքացուցիչների կամ խարույկի):
- Մի օգտագործեք IQOS ILUMA™-ն կամ IQOS ILUMA PRIME™-ը այն վայրերում, որտեղ առկա են դյուրավառ նյութեր, հեղուկներ և գազեր:
- IQOS ILUMA™-ն, IQOS ILUMA PRIME™-ը, սնուցման սարքը և լիցքավորման լարը չպետք է առնչվեն որևէ հեղուկի հետ: Մի դիպչեք դրանց, եթե թրջվել են կամ ընկել են որևէ հեղուկի մեջ:
- Մի մաքրեք սարքը մաքրող միջոցներով:
- Պարբերաբար մաքրեք IQOS ILUMA™-ի և IQOS ILUMA PRIME™-ի USB լիցքավորման բնիկը օտար մարմինների (օրինակ՝ փոշու մասնիկների) կուտակումից

խուսափելու համար և USB լարն օգտագործելուց առաջ ստուգեք USB բնիկը:

- Խնամքով վարվեք: IQOS ILUMA™-ն կամ IQOS ILUMA PRIME™-ը վայր մի գցեք կամ մի ցնցեք:
- Այս արտադրանքը չի պարունակում օգտագործողի կողմից սպասարկվող մասեր: Մի փորձեք բացել, փոխել, սպասարկել, քանդել կամ վերանորոգել IQOS ILUMA™-ի կամ IQOS ILUMA PRIME™-ի որևէ բաղադրիչ կամ փոխարինել բաղադրիչներից կամ մարտկոցներից որևէ մեկը:
- IQOS ILUMA™-ի և IQOS ILUMA PRIME™-ի լիցքավորման սարքը և բռնիչը համատեղելի չեն IQOS-ի նախորդ սերնդի արտադրանքի հետ: Մի փորձեք լիցքավորել IQOS ILUMA™-ի կամ IQOS ILUMA PRIME™-ի բռնիչը IQOS-ի ցանկացած նախորդ սերնդի լիցքավորման սարքով: IQOS-ի ցանկացած նախորդ

սերնդի բռնիչը մի փորձեք լիցքավորել IQOS ILUMA™-ի կամ IQOS ILUMA PRIME™-ի լիցքավորման սարքով:

- Մի օգտագործեք այս արտադրանքը, եթե այն ենթարկվել է ցրտի, ջերմության կամ խոնավության չափազանց մեծ ազդեցության:
- Մի դիպչեք IQOS ILUMA™-ն կամ IQOS ILUMA PRIME™-ն և/կամ աքսեսուարներին, եթե դրանք գերտաքացած են, կայծ են արձակում, գոլորշի են առաջացնում, բռնկվում կամ այրվում են: Եթե կարող եք, և դա հնարավոր է, զգուշորեն անջատեք սնուցման աղբյուրը:
- Մի փորձեք որևէ առարկա տեղադրել տաքացման սարքի մեջ, բացառությամբ SMARTCORE STICKS™-ի:
- Սարքը կարող է աշխատել միայն >0°C/<40°C ջերմաստիճանի դեպքում:
- SMARTCORE STICKS™-ը նախատեսված են

մեկանգամյա օգտագործման համար, և մեկ գլանակը չի կարելի կրկնակի օգտագործել, վառել այն լուցկիով, կրակայրիչով կամ կրակի այլ աղբյուրով:

Մարտկոցի ռիսկերը

IQOS ILUMA™-ն և IQOS ILUMA PRIME™-ը սնուցվում են հերմետիկ լիթիում-իոնային (Li-ion) մարտկոցներով: Օգտագործման նորմալ պայմաններում մարտկոցը հերմետիկ է: Եթե նկատում եք մարտկոցի հեղուկի արտահոսք, հետևեք հետևյալ նախազգուշական միջոցներին.

- Եթե մարտկոցի արտահոսքի հեղուկ եք կուլ տվել, անհապաղ դիմեք բժշկի: Փսխում մի առաջացրեք, ոչինչ մի կերեք և մի խմեք:
- Եթե դուք շնչել եք արտահոսող մարտկոցի գոլորշիները, դուրս եկեք մաքուր օդի և դիմեք բժշկի:
- Եթե մարտկոցի հեղուկը դիպչել է ձեր մաշկին, լվացեք այդ հատվածը, ինչպես նաև ձեռքերը, և խուսափեք աչքերին դիպչելուց:
- Եթե մարտկոցի հեղուկը դիպչել է ձեր աչքերին, անմիջապես լվացվեք մաքուր հոսող ջրով առնվազն 15 րոպե և դիմեք բժշկի:

⚠ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ Ջերմային այրման ռիսկ

Անվտանգության այս նախազգուշացումներին և ցուցումներին չհետևելը կարող է հանգեցնել ջերմային այրվածքների.

- Պահեք IQOS ILUMA™-ն կամ IQOS ILUMA PRIME™-ը և SMARTCORE STICKS™-ը մաքուր, չոր և զով տեղում:
- Մի օգտագործեք IQOS ILUMA™-ն կամ IQOS ILUMA PRIME™-ը և SMARTCORE STICKS™-ը բարձր խոնավության պայմաններում կամ արևի ուղիղ ճառագայթների տակ:
- Մի օգտագործեք այն SMARTCORE STICKS™-ը, որոնք ենթարկվել են չափազանց բարձր ջերմության կամ խոնավության:
- Օգտագործելու ընթացքում մի հեռացրեք SMARTCORE STICK™-ը:

⚠ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ Ալերգիկ ռեակցիայի ռիսկը

- IQOS ILUMA™-ի կամ IQOS ILUMA PRIME™-ի և SMARTCORE STICKS™-ի օգտագործումը կարող է առաջացնել ալերգիկ ռեակցիա, օրինակ՝ դեմքի, շրթունքների, լեզվի, լնդերի, կոկորդի կամ մարմնի այտուցվածություն կամ շնչառական խնդիրներ:
- Վերը նշված ախտանիշներից որևէ մեկը զգալու դեպքում դադարեք օգտագործել IQOS ILUMA™-ն կամ IQOS ILUMA PRIME™-ը և SMARTCORE STICKS™-ը և անմիջապես դիմեք բժշկի, քանի որ դրանք կարող են վկայել լուրջ ալերգիկ ռեակցիայի մասին:

SMARTCORE STICKS™-ի օգտագործումը

- IQOS ILUMA™-ն և IQOS ILUMA PRIME™-ը օգտագործեք միայն SMARTCORE STICKS™-ի հետ՝ հատուկ նախագծված IQOS ILUMA™ և IQOS ILUMA PRIME™ սարքերի համար:
- Երբեք մի օգտագործեք IQOS ILUMA™-ն կամ IQOS ILUMA PRIME™-ը ծխախոտի կամ նման արտադրանքների հետ:

- Մի օգտագործեք SMARTCORE STICKS™-ը նախորդ սերնդի IQOS սարքերի հետ:
- Ոչ մի կերպ մի փոփոխեք SMARTCORE STICKS™-ը և որևէ նյութ մի ավելացրեք SMARTCORE STICKS™-ի մեջ: Դա կարող է վնասվածք ստանալու պատճառ դառնալ:

Պահեստավորում

- Սարքը հարկավոր է պահել մաքուր, չոր և զով տեղում: Մի պահեք 60°C-ից բարձր ջերմաստիճանի պայմաններում:
- Պահեք երեխաների համար անհասանելի վայրում:

Անցանկալի երևույթների կամ պատահարների մասին զեկուցում

- IQOS ILUMA™-ն, IQOS ILUMA PRIME™-ը և/կամ SMARTCORE STICKS™-ը օգտագործելու ընթացքում առաջացած առողջական խնդիրների դեպքում խորհրդակցեք բժշկի հետ:
- Անցանկալի երևույթի կամ պատահարի մասին տեղեկատվությունը կարող եք անմիջապես տրամադրել ձեր տարածաշրջանի Հաճախորդների սպասարկման կենտրոնին (մանրամասները նշված են Հաճախորդների սպասարկման և երաշխիքային գրքույկում): Կողմնակի ազդեցությունների մասին տեղեկացնելով՝ դուք կօգնեք լրացուցիչ տեղեկություն հավաքել սարքի անվտանգության մասին:
- Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք այցելել www.iqos.com

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Բռնիչ՝

IQOS ILUMA™ և IQOS ILUMA PRIME™
Մոդել C1402
Մարտկոցի տեսակը՝ Լիթիում-իոնային
վերալիցքավորվող մարտկոց
Մուտք՝ 5 V ⎓ 1.6 A
IQOS ILUMA™ Բռնիչ՝ Պատրաստված է Չինաստանում
IQOS ILUMA PRIME™ Բռնիչ՝ Պատրաստված է Չինաստանում

Լիցքավորման սարք՝

IQOS ILUMA PRIME™
Մոդել C1502
Մարտկոցի տեսակը՝
Լիթիում-իոնային
վերալիցքավորվող մարտկոց
Մուտք՝ 5 V ⎓ 2 A
Bluetooth® 5.0
Պատրաստված է Չինաստանում

Լիցքավորման սարք՝

IQOS ILUMA™
Մոդել M0001
Մարտկոցի տեսակը՝
Լիթիում-իոնային
վերալիցքավորվող մարտկոց
Մուտք՝ 5 V ⎓ 2 A
Bluetooth® 5.0
Պատրաստված է Չինաստանում

IQOS ILUMA™-ի և IQOS ILUMA PRIME™-ի լիցքավորման սարքերն ունեն այս նշանը Φ□Հ, որին հաջորդում է "SxxAxx", ինչը նշանակում է, որ IQOS ILUMA™-ն և IQOS ILUMA PRIME™-ը կարող են լիցքավորվել միայն ստորև թվարկված սնուցման սարքերի հաստատված մոդելներից մեկի միջոցով:

Մնուցման սարք՝
Մոդել՝ S52A21, S21A20, S21A22, S21A23, S21A25, S21A27, S82A40, S82A41, S82A42, S82A43, S82A45, S82A46
Մուտք՝ 100 V~240 V~50-60 Hz 0.3 A
Ելք՝ 5 V ⎓ 2 A
Ելքային հզորություն՝ 10.0 W
Միջին ակտիվ արդյունավետություն՝ 79.0%
Էլեկտրաէներգիայի սպառում առանց ծանրաբեռնվածության՝ <0.09 W
Պատրաստված է Չինաստանում

Օգտագործեք լիցքավորման լարի հետ
Պատրաստված է Չինաստանում

IQOS ILUMA™-Ն ԵՎ IQOS ILUMA PRIME™ -Ը ԹԱՓՈՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Վավեր է եվրամիության և ԵՏՏ երկրներում

Սարքը կամ դրա փաթեթավորման վրա այս նշանը ցույց է տալիս, որ սարքը և դրա բաղադրիչ մասերը (ներառյալ մարտկոցները) չպետք է թափոնվեն այլ կենցաղային թափոնների հետ միասին: Փոխարենը, խորհուրդ է տրվում թափոնել ձեր կողմից օգտագործված սարքավորումը՝ այն հանձնելով էլեկտրական կամ էլեկտրոնային սարքավորումների վերամշակման համար նախատեսված կետին: Բացի այդ, օգտագործված մարտկոցները կարելի է անվճար վերադարձնել վաճառքի կետին: Ձեր օգտագործած սարքավորումների (այդ թվում՝ մարտկոցների) տեսակավորումը և թափոնումը թույլ կտա պահպանել բնական ռեսուրսները, ինչպես նաև ապահովել դրանց վերամշակումը՝ չվնասելով մարդու առողջությունը և շրջապատող միջավայրը: Օգտագործման համար ոչ պիտանի սարքից՝ որպես չտեսակավորված կենցաղային թափոնից ազատվելը (օրինակ՝ թափոնների այրման կամ թաղման եղանակով) կարող է բացասական հետևանքներ թողնել շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա: Օգտագործման համար ոչ պիտանի սարքը վերամշակելու վայրերի մասին լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար դիմեք հաճախորդների սպասարկման կենտրոն: Արտադրանքի տեղական ներմուծողը կֆինանսավորի վերադարձված օգտագործված սարքի վերամշակումը հատուկ մասնագիտացված հավաքագրման վայրերում՝ տեղական պահանջներին համապատասխան:

ՄԱՐՏԿՈՑԻ ՀԵՌԱՑՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ (ԹԱՓՈՆԵԼՈՒ ԵՎ ՎԵՐԱՄՇԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ)

Մարտկոցները չպետք է հեռացվեն սպառողի կողմից: Արտադրանքի մաշվելուց հետո միայն լիազորված վերամշակողը կարող է ապահով կերպով հեռացնել մարտկոցները՝ հետևելով ստորև նշված քայլերին:

IQOS ILUMA PRIME™-ի լիցքավորման սարք (Մոդել C1502)՝

Քայլ 1՝ Սարքը ապամոնտաժելուց առաջ այն պետք է ամբողջովին լիցքաթափել:

Քայլ 2՝ Հեռացրեք ռետինե միջադիր լիցքավորման սարքի դռնակից:

Քայլ 3՝ Հեռացրեք 2 պտուտակները:

Քայլ 4՝ Հեռացրեք դռնակը՝ այն դանդաղորեն ուղղահայաց դուրս հանելով մետաղական պատյանից, ապա հանեք շրջանակի 2 պտուտակները:

Քայլ 5՝ Անջատեք բոլոր ճկուն տպատախտակները և միակցիչը՝ լիցքավորիչի տպատախտակը հանելու համար:

Քայլ 6՝ Հեռացրեք մարտկոցը՝ թեքելով այն դեպի վեր, և թափոնեք՝ համաձայն գործող կանոնակարգի:

IQOS ILUMA™-ի լիցքավորման սարք (Մոդել M0001)՝

Քայլ 1՝ Սարքը ապամոնտաժելուց առաջ այն պետք է ամբողջովին լիցքաթափել:

Քայլ 2՝ Հեռացրեք դռնակը մատներով:

Քայլ 3՝ Բացեք դռնակը և հանեք ստորին ու վերին պտուտակները:

Քայլ 4՝ Հեռացրեք լիցքավորիչի պատյանը:

Քայլ 5՝ Պտուտակեք էլեկտրոնային տպատախտակը (ընդամենը 1 պտուտակ):

Քայլ 6՝ Անջատեք մարտկոցի միակցիչը տպատախտակից: Մի կտրեք մարտկոցի լարերը:

Քայլ 7՝ Հեռացրեք մարտկոցը՝ թեքելով այն դեպի վեր, և թափոնեք՝ համաձայն գործող կանոնակարգի:

IQOS ILUMA™-ի և IQOS ILUMA PRIME™-ի բռնիչ (Մոդել C1402):

Քայլ 1՝ Սարքը ապամոնտաժելուց առաջ այն պետք է ամբողջովին լիցքաթափել:

Քայլ 2՝ Բացեք օղակը:

Քայլ 3՝ Բացեք կողպեքի կափարիչը, հանեք պարունակությունը պատյանից:

Քայլ 4՝ Անջատեք զոդիչը մարտկոցի ելուստից և բարձրացրեք այն:

Քայլ 5՝ Հեռացրեք մարտկոցը և թափոնեք այն՝ համաձայն գործող կանոնակարգի:

Համապատասխանության հաստատում

Սույնով Philip Morris Products S.A.-ն հաստատում է, որ IQOS ILUMA™-ն և IQOS ILUMA PRIME™-ը համապատասխանում են 2014/53/ԵՄ հրահանգի հիմնական պահանջներին և այլ համապատասխան դրույթներին: Համապատասխանության պաշտոնական հռչակագիրը կարող եք գտնել հետևյալ հասցեով՝ www.pmi.com/declarationofconformity

IQOS ILUMA™-ն և IQOS ILUMA PRIME™-ը աշխատում են 2.402 – 2.480 GHz հաճախականության տիրույթում 10.0dBm-ից պակաս առավելագույն ռադիոհաճախականության հզորությամբ:

Այս սարքը համապատասխանում է ռադիոհաճախականության ճառագայթման սահմաններին և ընտրվել է շարժական ճառագայթման պայմաններին համապատասխանելու համար՝ համաձայն EN 62311:2008:

IQOS ILUMA և IQOS ILUMA PRIME Սարքեր

Տեխնիկական կանոնակարգ «Տեխնիկական միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիություն» (ՄՄ ՏԿ 020/2011);

Տեխնիկական կանոնակարգ «Էլեկտրատեխնիկայի և ռադիոէլեկտրոնիկայի արտադրատեսակներում վտանգավոր նյութերի կիրառումը սահմանափակելու մասին» (ԵԱՏՄ ՏԿ 037/2016)

Սնուցման սարք

Տեխնիկական կանոնակարգ «Տեխնիկական միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիություն» (ՄՄ ՏԿ 020/2011); Տեխնիկական կանոնակարգ «Ցածրավոլտ սարքավորումների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 004/2011);

Տեխնիկական կանոնակարգ «Էլեկտրատեխնիկայի
և ռադիոէլեկտրոնիկայի արտադրատեսակներում
վտանգավոր նյութերի կիրառումը սահմանափակելու մասին» (ԵԱՏՄ ՏԿ 037/2016)

USB լար

Տեխնիկական կանոնակարգ «Էլեկտրատեխնիկայի և ռադիոէլեկտրոնիկայի արտադրատեսակներում վտանգավոր նյութերի կիրառումը սահմանափակելու մասին» (ԵԱՏՄ ՏԿ 037/2016)

Նախագծված և արտադրված է Philip Morris Products S.A.-ի ղեկավարությամբ, Քե Ժանղեներ 3, 2000 Նյոշատել, Շվեյցարիա:

Առաջարկությունների և բողոքների համար դիմել ներմուծող կազմակերպությանը՝ «Ֆիլիպ Մորրիս Արմենիա» ՍՊԸ, ՀՀ, Երևան 0010, Վ. Սարգսյան 2:

Bluetooth®

Bluetooth® բառը և լոգոները հանդիսանում են Bluetooth SIG, Inc.-ի գրանցված ապրանքային նշանները, և դրանց օգտագործումը Philip Morris Products S.A.-ի և նրա հետ փոխկապակցված անձանց կողմից կատարվում է լիցենզիայի հիման վրա:

2018 Copyright Philip Morris Products S.A. Այլ ապրանքանիշերը և ապրանքների անվանումները պատկանում են իրենց համապատասխան սեփականատերերին:

IQOS ILUMA™-ի և IQOS ILUMA PRIME™-ի համար ներկառուցված ծրագրակազմի լիցենզիայի մասին լրացուցիչ տեղեկությունները հասանելի են www.iqos.com կայքում:

Սույն նախազգուշացումներում և անվտանգության ցուցումներում թվարկված ոչ բոլոր շարժական սարքերն են ներառված այս փաթեթում:

© 2021 Copyright Philip Morris Products S.A.

EAC CE